Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 23-ի N 868 - Ա որոշման

ՑԱՆԿ

«ԷԿՈՏՈՄԱՏՈ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

| NN ը/կ | ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը | Անվանումը | Մոդելը | Չափի միավորը | Քանակը | Ծագման երկիրը | Արտահանման երկիրը | Արժեքը (դրամ) | Ներմուծման ժամկետը (տարի/ամիս) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | |
| 1 | 9406 0031 | Ջերմոցներ, այդ թվում՝ | - | կգ | 625000 | Հոլանդիա, Ուկրաինա, Ռուսաստան, Չինաստան | Հոլանդիա, Ուկրաինա, Ռուսաստան, Չինաստան | 1850575000 | 2011/VI | 2013/X |
| 2 | 7308 | Պողպատյա կոնստրուկցիա՝ լրակազմով | - | կգ | 170000 | Հոլանդիա, Ուկրաինա, Ռուսաստան, Չինաստան | Հոլանդիա, Ուկրաինա, Ռուսաստան, Չինաստան | | 2011/VI | 2013/X |
| 3 | 7003 | Ջերմոցների արտաքին ապակի | - | կգ | 325000 | Հոլանդիա, Ուկրաինա, Ռուսաստան, Չինաստան | Հոլանդիա, Ուկրաինա, Ռուսաստան, Չինաստան | | 2011/VI | 2013/X |
| 4 | 7610 | Ալյումինե կոնստրուկցիա՝ լրակազմով | - | կգ | 84000 | Հոլանդիա, Ուկրաինա, Ռուսաստան, Չինաստան | Հոլանդիա, Ուկրաինա, Ռուսաստան, Չինաստան | | 2011/VI | 2013/X |
| 5 | 6810 | Բետոնե սյուներ | - | կգ | 50000 | Հոլանդիա, | Հոլանդիա, | | 2011/VI | 2013/X |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Ուկրաինա, Ռուսաստան | Ուկրաինա, Ռուսաստան | | | |
| 6 | 8436 | Ջերմոցային համալիրի սարքավորումներ՝ լրակազմով, այդ թվում | - | հատ | 160 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 7 | 8403 | Ջեռուցման համակարգի կաթսաներ՝ լրակազմով, կաթսաներ՝ կենտրոնական ջեռուցման՝ լրակազմով | - | հատ | 2 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 8 | 8404 | Տաքացուցիչ, օժանդակ սարքա-վորումներ շոգեջրային կամ այլ շոգեու-ժային կայանքների համար՝ լրակազմով | - | հատ | 2 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 9 | 7616 | Ալյումինե այլ արտադրատեսակներ | - | կգ | 22500 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 10 | 8416 | Բոցամուղներ հեղուկ վառելիքի համար, փոշենման կարծր վառելիքի համար կամ գազային հրածորաններ. մեխանիկական հնոցներ, ներառյալ դրանց մեխանիկական կրակակալ ճա-ղացանցերը, մոխրահեռացուցիչները և համանման այլ հարմարանքներ | - | հատ | 2 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 11 | 7306 | Իզոլացված խողովակներ սև մետաղից | - | կգ | 23000 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 12 | 730900 | Ջերմախնայող կաթսա սև մետաղից | - | հատ | 2 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 13 | 7315 | Շղթաներ սև մետաղից | - | հատ | 7 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 14 | 7306 | Խողովակներ սև մետաղից, < Ք168mm | - | կգ | 220000 | Հոլանդիա, Գերմանիա, Ուկրաինա,ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, Ուկրաինա,ՌԴ | | 2011/VI | 2013/X |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | 7306 3080 | Խողովակներ սև մետաղից, Ք168mm<Ք406mm | - | կգ | 23000 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 16 | 7305 3900 | խողովակներ սև մետաղից, Ք >406mm | - | կգ | 23000 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 17 | 7307 | սև մետաղից միացումներ – խողովակների ֆիտինգներ | - | կգ | 13000 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 18 | 4009 3100 | Ռետինե միացման խողովակներ, առանց ֆիտինգների | - | կգ | 1050 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 19 | 7326 | Սև մետաղից արտադրանք՝ լրակազմով | - | կգ | 11000 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 20 | 7308 90 | Ժելոբ՝ սև մետաղների թիթեղից | - | կգ | 9200 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 21 | 8481 | Սովորական և պնևմատիկ փականներ | - | հատ | 110 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 22 | 8413 | Պոմպեր հեղուկային, ծախսաչափերով կամ առանց դրա, հեղուկների վերհաններ | - | հատ | 55 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 23 | 7019 | Ջերմամեկուսիչ ներդիր Ապակյա մանրաթել և դրանից արտադրանք | - | կգ | 7000 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 24 | 7308 | Մետաղական կոնստրուկցիաներ, արտադրանք սև մետաղից և ալյումինիից | - | կգ | 105000 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 25 | 8484 | Շերթավոր մետաղից ներդիրներ և մեկուսիչներ | - | կգ | 7000 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 26 | 7318 | Պտուտակներ | - | կգ | 11000 | Հոլանդիա, | Հոլանդիա, | | 2011/VI | 2013/X |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Գերմանիա, ՌԴ | Գերմանիա, ՌԴ | | | |
| 27 | 8424 | CO2-օդամղիչ՝ լրակազմով | - | հատ | 3 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 28 | 9026 | Գազանալիզատորներ՝ լրակազմով | - | հատ | 7 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 29 | 8515 | Զոդման սարքավորումներ՝ լրակազմով | - | հատ | 7 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 30 | 8430 | Մեքենաներ և մեխանիզմներ տեղափոխելու, համահարթման, պրոֆիլավորման, մշակելու, տոփանելու, խտացնելու, բնահողի, օգտակար հանածոների կամ հանքաքարի հորատման կամ հանման համար, սարքավորում ցցեր խփելու և հանելու համար, գութանային և ռոտորային ձյունամաքրիչներ՝ լրակազմով | - | հատ | 3 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 31 | 8408 | Ներքին այրման շարժիչ | | հատ | 1 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 32 | 8424 | Ոռոգման համակարգ՝ լրակազմով | - | հատ | 2 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 33 | 8424 9000 | Ոռոգման համակարգի մասեր՝ լրակազմով | - | հատ | 9 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 34 | 8471 3000 | Համակարգիչներ պորտատիվ ՝ լրակազմով | - | հատ | 2 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 35 | 8473 30 | Համակարգչային աքսեսուարներ՝ լրակազմով | - | հատ | 3 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 36 | 9032 | Ավտոմատ կառավարման և կարգավորման սարքեր և սարքավորումներ՝ լրակազմով | - | հատ | 2 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 37 | 4901 | Տպագիր նյութեր | - | կգ | 11 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 38 | 9027 | Թթվաչափ (PH չափիչ) ՝ լրակազմով | - | հատ | 7 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 39 | 8542 | Էլեկտրոնային ինտեգրալային սխեմաներ | - | հատ | 7 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 40 | 8421 | Գազերի և ջրի զտիչներ՝ լրակազմով | - | հատ | 7 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 41 | 3920<br>3921 | Պլաստմասսայե ժապավեններ | - | կգ | 1050 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 42 | 4421 | Փայտյա իրեր | | կգ | 55 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 43 | 8544 | Մալուխներ | - | կգ | 26500 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 44 | 3926 | Պլաստմասսայե դետալներ, սնուցող պոլիմերային ասեղիկներ | - | կգ | 300 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 45 | 7315 | Շղթա<br>Շղթաներ սև մետաղից | - | հատ | 9 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 46 | 8539 | Լրացուցիչ լուսավորման լամպեր՝ լրակազմով | - | հատ | 4400 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 47 | 8536 61 | Լամպի բնիկներ (патроны) | - | հատ | 4400 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 48 | 3506 | Սոսնձանյութեր | - | կգ | 4600 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 49 | 8471 | Համակարգիչներ | - | հատ | 2 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 50 | 3917 | Պլաստիկ խողովակներ՝ իրենց միացումներով | - | կգ | 105000 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 51 | 7608, 7609 | Ալյումինե խողովակներ՝ իրենց միացումներով | - | կգ | 7000 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 52 | 8428 | Ամբարձիչ մեքենա և հարմարանքներ՝ լրակազմով | - | հատ | 2 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 53 | 3925 | Պլաստմասսայե շինարարական դետալներ, ռեզերվուարներ | - | կգ | 42000 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 54 | 8504 | Էլեկտրական տրանսֆորմատորներ՝ լրակազմով | - | հատ | 9 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 55 | 8537 | Բաշխիչ վահանակներ և այլ հիմքեր էլեկտրական ապարատների համար՝ լրակազմով | - | հատ | 9 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 56 | 8483 | Փոխհաղորդիչ լիսեռներ | - | հատ | 3 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 57 | 8414 | Պոմպեր օդային կամ վակումային, օդային կամ գազային | - | հատ | 21 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, | | 2011/VI | 2013/X |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կոմպրեսորներ և օդափոխիչներ, օդափոխիչ կամ օդաքաշ գլխադիր թասակներ կամ պահարաններ օդափոխիչներով, քամիչներով կամ առանց քամիչների | | | | | ՌԴ | | | |
| 58 | 8481 | Ծորակներ, կափույրներ, վենտիլներ և համանման ամրաններ` խողովակատարների, կաթսաների, ջրամբարների, գլանատակառների, բաքերի և համանման տարողությունների համար` ներառյալ ռեդուկցային և ջերմակարգավորիչ կափույրներ | - | հատ | 21 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 59 | 8701 | Ամբարձիչով տրակտոր` լրակազմով | - | հատ | 1 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 60 | 4008, 4016 | Ռետինե դետալներ 10% - միայն 4016 91000` հատակի ծածկոցներ և գորգիկներ, վուլկանացված ռետինից, բացի կոշտ ռետինից | - | կգ | 3700 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 61 | 5407 | Սինթետիկ կտոր | - | մ.ք. | 30000 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 62 | 5607 | Պարաններ | - | կգ | 520 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 63 | 5903 | Տեքստիլ նյութեր | - | մ.ք. | 30000 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 64 | 6005 | Գործվածքներ | - | կգ | 27500 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 65 | 6806 | Հանքային նյութեր | - | կգ | 27500 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 66 | 7209, 7212 | Թիթեղ | - | կգ | 37000 | Հոլանդիա, | Հոլանդիա, | | 2011/VI | 2013/X |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Գերմանիա, ՌԴ | Գերմանիա, ՌԴ | | | |
| 67 | 7216 | Անկյունակներ | - | կգ | 6500 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 68 | 7419 | Պղնձե դետալներ | - | կգ | 850 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 69 | 7606 | Ալյումինե թիթեղներ | - | կգ | 110 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 70 | 7607 | Ալյումինե թաղանթ | - | կգ | 27500 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 71 | 8201 | Գործիքներ | - | հատ | 16 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 72 | 8427 | Ամբարձիչ | - | հատ | 1 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 73 | 9603 | Խոզանակներ | - | հատ | 42 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 74 | 8418 | Սառնարանային սարքավորումներ՝ լրակազմով | - | հատ | 7 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | | 2011/VI | 2013/X |
| 75 | 8424 81990 | Օդի խոնավացման սարքավորում՝ լրակազմով | - | հատ | 4 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | 6875000 | 2011/VI | 2013/X |
| 76 | 8421 21000 | Ջրի մաքրման սարքավորում՝ լրակազմով | - | հատ | 4 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | 1250000 | 2011/VI | 2013/X |
| 77 | 8421 39 | Գազերի մաքրման սարքավորում՝ լրակազմով | - | հատ | 4 | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Գերմանիա, ՌԴ | 520833 | 2011/VI | 2013/X |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 78 | 8422 | Փաթեթավորող սարքավորում լրակազմով | - | հատ | 1 | Հոլանդիա, Իտալիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Իտալիա, Գերմանիա, ՌԴ | 41250000 | 2011/VI | 2013/X |
| 79 | 8433 | Տեսակավորող սարքավորում լրակազմով | - | հատ | 1 | Հոլանդիա, Իտալիա, Գերմանիա, ՌԴ | Հոլանդիա, Իտալիա, Գերմանիա, ՌԴ | 46750000 | 2011/VI | 2013/X |
| 80 | **Ընդամենը** | | | | | | | **1947220833** | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 23-ի N 868 -Ա որոշման

# Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N

## «ԷԿՈՏՕՄԱՏՕ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երևան ------ -------------------- 2011 թ.

Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս նախարար Տիգրան Դավթյանի, մի կողմից, և «ԷԿՈՏՕՄԱՏՕ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն), ի դեմս տնօրեն Մարկոս Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (նախարարությունը և ընկերությունը միասին հիշատակելու դեպքում, այսուհետ՝ կողմեր) հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 868 -Ա որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

Պայմանագրով ընկերությունը պարտավորվում է կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-ին հոդվածով սահմանված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգը հաստատելու մասին» N 600-Ն որոշմամբ սահմանված կարգով ընտրված ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) նախատեսված աշխատանքները, իսկ

նախարարությունը պարտավորվում է իր իրավասությունների շրջանակներում աջակցել ընկերությանը ծրագրի իրականացման գործընթացում:

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1. Նախարարությունը պարտավոր է`

2.1.1. կատարել ծրագրի իրականացման մոնիթորինգ:

2.2. Նախարարությունն իրավունք ունի`

2.2.1. կատարելու ընկերության կողմից իրականացվող ծրագրի նկատմամբ վերահսկողություն.

2.2.2. պահանջելու ընկերությունից ներկայացնել պայմանագրի 3.6-րդ կետով սահմանված հաշվետվությունները:

2.3. Ընկերությունը պարտավոր է`

2.3.1. մինչև 2012 թվականի հունվարի 1-ը կառուցել ներդրումային ծրագրով նախատեսված` վարդերի աճեցման համար համապատասխան ջերմոցային տնտեսություն.

2.3.2. պայմանագրի 2.3.1-ին ենթակետով նշված ծրագրի շրջանակներում ստեղծել առնվազն 27 նոր աշխատատեղ` ապահովելով վերջիններին մոտ 100 հազ. դրամ միջին աշխատավարձով.

2.3.3. հարկային պարտավորությունները և սոցիալական ապահովության վճարներն ավելացնել աշխատողների թվի և արտադրանքի իրացման ծավալների ավելացմանը համապատասխան.

2.3.4. կատարել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ տրված ցուցումները.

2.3.5. իրականացնել ծրագրով նախատեսված այլ անհրաժեշտ աշխատանքներ:

2.4. Ընկերությունն իրավունք ունի`

2.4.1. ինքնուրույն որոշելու ծրագրի իրականացման մեխանիզմները.

2.4.2. ծրագրի իրականացմանը ներգրավվելու այլ կազմակերպությունների և անհատ փորձագետների, որոնց կողմից իրականացվող աշխատանքների որակի պատասխանատվությունը կրում է ընկերությունը:

3. Հաշվետվություն և մոնիթորինգ

3.4. Ընկերության կողմից ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացվում է մոնիթորինգ:

3.5. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է իրականացնել ծրագրի շրջանակներում մոնիթորինգ, ինչպես նաև ուսումնասիրել ընկերության կողմից իրականացված մոնիթորինգը և ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր ու նյութեր:

3.6. Մոնիթորինգի ընթացքում բացահայտված թերացումների և բացթողումների շտկման նպատակով նախարարության կողմից ընկերությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.7. Նախարարության կողմից իրականացվող մոնիթորինգի ընթացքում ընկերությունից կարող են պահանջվել գրավոր և բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.8. Մոնիթորինգն իրականացվում է ծրագրով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը գնահատելու նպատակով:

3.9. Ընկերությունը նախարարությանը ներկայացնում է եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ (տեքստային և ֆինանսական):

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Ընկերությունը պայմանագրով և ծրագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, նախարարության վերահսկողությունից խուսափելու

դեպքում, նախարարությունն իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու ընկերությունից վճարել հետաձգված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 868 -Ա որոշման N 1 հավելվածով սահմանված՝ ընկերության կողմից ներմուծվող ապրանքների ընդհանուր գումարից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար օրենքով սահմանված տույժերը՝ ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման օրվանից մինչև գործարքն իրականացնելու հաշվետու ժամանակաշրջանի ավարտը՝ «Ավելացված արժեքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4.2. Կողմերը համաձայնվում են պայմանագրի շուրջ ծագող տարաձայնությունները կարգավորել բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև ծրագրի պատշաճ իրականացման ավարտը:

5.2. Ծրագիրը համարվում է կատարված՝ պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման դեպքում:

## 6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը

և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը` դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.2. Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Պայմանագիրը կնքված է հայերենով` 2 (երկու) օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8. Կողմերի հասցեները և ստորագրությունները

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Հասցեն` ՀՀ, քաղ. Երևան, Մ. Մկրտչյան 5

_______________________Տիգրան Դավթյան

Կ.Տ.

«ԷԿՈՏՈՄԱՏՈ» ՓԲԸ

Հասցեն` ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գողթ

__________________Մարկոս Ղարիբյան

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ